

ՅՈՒՆԵՍԿՈ ԳՊՐՈՑԸ

ԵՒ

ՆՐԱ ԶԱՐԳԵՑՄԱՆ ԹՐՋԱՆՆԵՐԸ

(Շարունակություն)

Նիկ. Ադոնցն իր ուսումնասիրություններում մեջ կանգ է առնում նաեւ մի ուրիշ կարեւոր հարցի վրայ, թէ արդեօք կարող է քերականի մեկնիչ Գաւիթ փիլիսոփան լինել Սահմանքի իմաստասիրությունների հեղինակը կամ թարգմանը: Գաւիթի մեկնություններում Սահմանքի առնչությունը պարզելու համար նա մատնացոյց է անում այդ երկերում ճարտասանությունների բաժանմանը վերաբերեալ հետեւեալ հատուածը.

ԴԱՄ. քնն. մեկն., 84, 14-17.

Սահմ., 207, 1-3.

«Քանզի տեսակք ճարտասանականին երիւք այսուքիւք կատարին եւ վարին՝ տեսնականն եւ բաղիւտ-հալանաւն եւ կացողական-նաւն, զուգահաւասար հատեալք ի սեռէն»:

«Գարձեալ ընդդէմ դնելու առն, թէ ահա ճարտասանականն սեռ գործով, յերիւ բաժանի ի տեսական-յարեականն, ի բաղիւտ-հականն, ի կացողականն»:

Սահմանքի մէջ ճարտասանությունների այս բաժանումը համարում է «ոչ բարեղոյ» մինչդեռ Գաւիթ քերականը կողմնակից է այդ բաժանման: Կարծիքների սկզբունքային այս տարբերությունը Գաւիթի մեկնություններում Սահմանքի մէջ Նիկ. Ադոնցը համարում է պարզ մի նշան, որ Գաւիթը չէ կարող լինել Սահմանքի հեղինակը (տե՛ս «Արուեստ Գիտնիսեայ», էջ CLXXXII, CLXXXIII)¹: Նիկ. Ադոնցի այս դիտողությունները պէտք է աւելացնել նաեւ այն, որ Գաւիթ քերականի թէ ամբողջ մեկնությունները ըստ իր բովանդակության եւ թէ իմաստասիրական առանձին դատողությունները չունեն այն հատուկ բան ու գիտություն որականները, որոնք առանձնայատուկ են Սահմանքի հեղինակ Գաւիթի մեկնիչին: Եթէ Գաւիթ քերականը լինէր Ուլիմպիոգորոսի դպրոցի նորադատական Գաւիթ փիլիսոփան, պարզ է, որ նրա իմաստասիրական դատողությունները պէտք է համապատասխանէին այս դպրոցում մշակուած տեսություններին, մինչդեռ նրա մեկնությունները մեջ արիստոտելեան իմաստասիրությունների մոտեցումով եւ աղբարտիկ գաղափարները քաղուած են, ինչպէս տեսնուած իսմէր հայերէն թարգմանություններին:

¹ Նիկ. Ադոնցը հիմնաւոր չէ բնութագրում Նիկ. Ադոնցի այս դիտողությունները եւ ենթադրում է, որ Գաւիթը ժամանակի ընթացքում կարող էր իր կարծիքը փոխել. տե՛ս «Գիտողություններ Ն. Ադոնցի նոր գրքի վրայ», Երբաւա 1919, յունգլ.-գեկտ., էջ 68:

սիրությունների մոտեցումով եւ աղբարտիկ գաղափարները քաղուած են, ինչպէս տեսնուած իսմէր հայերէն թարգմանություններին:

Եթէ Գաւիթ քերականը Սահմանքի հեղինակը չէ, հարց է ծագում, թէ արդեօք չէ կարելի նրան վերագրել Սահմանքի թարգմանությունը: Այս խնդրի նկատմամբ Նիկ. Ադոնցը մատնացոյց է անում, որ արուեստի սահմանման մէջ (տե՛ս վերեւ § 41, 2) Սահմանքի թարգմանը չաճաղիւս բառը թարգմանել է «հասունություն», մինչդեռ Գաւիթ քերականն իր մեկնություններում մէջ չաճաղիւս բառի այդ ուղիղ իմաստը չգիտէ եւ ենթադրում է նրա իմաստը «թողում» չաճաղիւս բայից: Նիկ. Ադոնցն անհնարին է համարում, որ միեւնոյն անձը կարելի ընդհանրապէս այդ եղբը Սահմանքի մէջ թարգմանած լինի ուղիղ, իսկ քերականի մեկնությունները մեկնած լինի բողոքովին սխալ, ուստի եւ եզրակացնում է, որ Սահմանքի թարգմանը եւ Գաւիթ քերականը պէտք է լինեն տարբեր անձնաւորություններ (տե՛ս «Արուեստ Գիտնիսեայ», էջ CLXXXVIII): Կան եւ ուրիշ դէպքեր, երբ ամենատարբերակաւ եղբներն իսկ չեն համապատասխանում իրար Գաւիթ քերականի ու Գաւիթ-Ուլիմպիոգորոսի խմբի երկերում: Այդ տեսակէտից ուշադրություն արժանի է Գաւիթի մեկնությունների մէջ հետեւեալ հատուածը. էջ 81, 8-11. «Արդ հարկաւորաբար բանական արուեստիս առաջարկությունն հնգիւքս այսգիւք կատարի. դիտաւորությունամբ, հարազատությունամբ, վերադրաւն, վարդապետականաւն եւ ըստ մասին բաժանմամբ, յորում եւ աւգտակարն»: Այս հատուածում «վերագրին» եւ «աւգտակարն» համապատասխանում են յունարէն ἡ ἐπιγραφὴ եւ τὸ χρονονόμεον եղբներին, իսկ Գաւիթ-Ուլիմպիոգորոսի խմբի երկերում նոյն եղբները թարգմանուած են «մակագրություն» եւ «պիտանացու» (Գ.Պորփ. էջ 250, Գեկտ. Վերլ. էջ 560, 562, Է.Մ. Ստ. էջ 36, 40): Սահմանքի թարգմանությունները, ինչպէս երեւում է լեզուական այս դիտողություններից, դժուար է վերագրել Գաւիթ քերականին: Հակառակն ապացուցանելու համար անհրաժեշտ են զրական ու որոշ փաստեր: Պէտք է ասել, որ ժամանակագրական տեսակէտից միանգամայն հնարաւոր է Սահմանքի թարգմանի միանգամայն հնարաւոր է Սահմանքի թարգմանությունները վերագրել քերականի մեկնիչ «եռանուն Գաւիթ փիլիսոփային», որովհետեւ նրանց երկուսի ժամանակն էլ զրուելու է, ինչպէս տեսնուած իսմէր հայերէն թարգմանություններից յետոյ:

Անանունի մեկնութիւնը, որ վերեւ մենք վերագրեցինք Պօղոս մեկնիչին, գրուած պիտի լինի, ինչպէս երեւում է նրա բովանդակութիւնից, Դաւթի մեկնութիւնից յետոյ եօթերորդ դարում: Այդ մեկնութեան մէջ յիշում է Դաւիթ անունով մի հայ մատենագիր հետեւեալ հատուածներում¹. “Իսկ քաջութեամբ տաղ ասի դաւթեան քերթութիւն (եւ) որ յաղագս Տիգրանայ, տեւս “Արուեստ Դիոնիսեայ, էջ 128, 21—129, 1, 2. “Իսկ բան շարագրութիւն է բառի, յորժամ շարագրէ որ դաւիթն զշարագրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոցն եւ ասիցէ յարապէս եթէ Դաւիթ շարագրեաց զպատերազմն մարաց եւ հայոց, որ է բան, տեւս նոյնը, էջ 138, 4-8¹: Արդ՝ հարց է ծագում, թէ ո՞վ է հռչակաւոր այս Դաւիթը, որը շարունակ յիշում է Անանունի մեկնութեան մէջ: Որովհետեւ Անանունի ժամանակը դրուելու է, հաւանաբար, անմիջապէս Դաւթից յետոյ եւ նա կարող է լինել այս վերջինի աշակերտը, ո՛չ միայն հնարաւոր, այլ եւ հաւանական է թւում, որ Անանունի յիշատակած Դաւիթ քերթողը լինի քերականի մեկնութեան հեղինակ Դաւիթ փիլիսոփան: Այս հարցի լուծումն առանձին կարեւորութիւն ունի, որովհետեւ Խորենացին Տիգրան Մեծի պատմութեան համար ունեցել է, որպէս աղբիւր, բանաստեղծական մի գրուածք, որը նա պարզ յիշատակում է եւ անուանում “Չորս հագներգութիւնք, զարգաստւորին ի բանս եւ զիմաստոյն իսկ եւ ի մէջ իմաստոց իմաստնագունին”²: Անանունի յիշած “Դաւթեան քերթութիւնը որ յաղագս Տիգրանայ եւ Դաւթի շարագրութիւնը հայոց ու մարաց պատերազմի մասին թերեւս կապ ունենան “Չորս հագներգութեանց” հետ, որի “արգաստւոր” եւ “ի մէջ իմաստոց իմաստնագոյն” հեղինակը եւս գուցէ առնչութիւն ունենայ վերոյիշեալ Դաւիթների հետ: Ինչպէս տեսնում ենք, եօթերորդ դարի հայոց մատենագրութեան պատմութիւնը պէտք է առաջին հերթին լուծէ մի շարք Դաւիթ անունով հեղինակների խնդիրը, որոնցից յայտնի են արդէն՝ Դաւիթ Հաբբացին, Դաւիթ Տարօնացին, Դաւիթ Բագրեւանդացին, քերականի մեկնիչ Դաւիթ փիլիսոփան եւ, ըստ երեւոյթին, նաեւ Անանունի յիշած հռչակաւոր Դաւիթ քերթողը: Սրանցից մի քանիսը կարող են միեւնոյն հեղի-

նակը լինել, բայց այդ խնդիրը մնում է դեռ անորոշ ու կարօտ յատուկ լուսաբանութեան:

Վերոյիշեալ մեր դիտողութիւնները թրահացու քերականութեան ու նրա հնագոյն մեկնիչների մասին, ինչպէս եւ նրանց ծագման ժամանակաշրջանների որոշումը, կարծում եմ, որ բաւական նպաստելու են այս խնդիրների պարզաբանման, եւ բանասէրների հաւաքական ջանքերով յունաբան շրջանի մեր մատենագրութեան համար ստեղծուելու են հետզհետէ ամուր ու հաստատուն հիմքեր:

§ 52. ՅԱՆՆԱՆՈՒՆԻ ԴԱՎԻԹԻ ԶԱՐԳԱՍՏՎՈՐԻՆ Ի ԲԱՆՍ ԵՎ Ի ՄԵՋ ԻՄԱՍՏՈՑ ԻՄԱՍՏՆԱԳՈՒՆԻՆ: — Յունաբան դպրոցի իմաստասիրական, ճարտասանական ու քերականական երկերը բաժանուում են, ինչպէս տեսանք, երեք տարբեր խմբերի, որոնք զանազան ժամանակաշրջանների աշխատութիւններ են եւ ծագել են յաջորդաբար, մօտ երկու հարիւր տարուայ ընթացքում, սկսած վեցերորդ դարի սկիզբներից կամ հինգերորդ դարի վերջերից, ուրեմն, գլխաւորապէս, վեցերորդ եւ եօթերորդ դարերում: Եթէ անտես առնենք Դաւիթ Անյաղթի ու նրա ընկերակիցների մասին յետին դարերում յերկրուած առասպելանման աւանդութիւնը, որը դարերի ընթացքում խճճել ու մեծապէս դժուարացրել էր այս խնդիրների լուծումը, հայոց մատենագրութեան մէջ կան նաեւ ուրիշ կողմնակի վկայութիւններ ու ակնարկներ, որոնք կատարելապէս հաստատում են յունաբան դպրոցի այն երկարատեւ զարգացման ընթացքը, որ սոյն ուսումնասիրութեան մէջ մանրադնին կերպով քննուած ու լուսաբանուած է:

Հայոց մատենագրութեան մէջ, ինչպէս յայտնի է, յունաբան դպրոցի ականաւոր ներկայացուցիչները, մեծ մասամբ, անուանում են փիլիսոփայ կամ իմաստասէր, ճարտասան եւ քերթող: Արդ՝ հինգերորդ դարի վերջերից սկսած հայոց մատենագրութեան մէջ յիշատակուած կան մի շարք հայ մատենագիրներ, որոնք կրում են վերոյիշեալ այս մականունները: Հնագոյնը սրանից Ղազար Փարպեցու Թղթի մէջ յիշուած “Մովսէս փիլիսոփան” է, որն ապրած պիտի լինի հինգերորդ դարի վերջերում: Որ այս Մովսէսը յունաբան դպրոցի հեղինակ է, այդ կարելի է ենթադրել նրա գրուածքների մասին Փարպեցու ծանօթ վկայութիւնից, նաեւ նրա “փիլիսոփոս” մականունան յունական վերջաւորութիւնից: Ասողիկի վկայութեամբ, վեցերորդ

¹ Դաւիթ անունը յիշատակում է նաեւ յաճախ օրինակների մէջ, էջ 127, 137, 145:

² Տե՛ս Մովսէս Խորենացւոյ. Պատմութիւն հայոց, Տփլիս 1913, էջ 65. նաեւ Մ. Աբեղեան, Հայ ժողովրդական առասպելները, Ղազարշապատ 1901 թ. էջ 11:

դարի առաջին կիսում յաջորդել է Սահակ կաթողիկոսին «Տէր Բրիտանիոս փիլիսոփան ի դաւառէն Բագրեւանդայ եւ գեղջէն Տիրառճայ» (Պետերբուրգ, 1885, էջ 81): Նոյն պատմիչն ասելով, դարձեալ վեցերորդ դարի առաջին կիսում «Եզրաս Անգեղացի, աշակերտ ճարտասանին Մովսիսի եպիսկոպոսի Բագրեւանդ գաւառի՝ զգաստ ճարտասանիցն բազմացուցանէր» (էջ 82): «Քերթող» եւ «Իմաստասէր» է անուանուում 554 թուին Գուինի Բ. ժողովին մասնակցող Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը¹: Մովսէս Կաղանկատուացին եւս վեցերորդ դարի երկրորդ կիսում յիշում է Կարնոյ եպիսկոպոս Թէոդորոսին, որին կոչում էին «փիլիսոփայապետ»։ «Ընդ երկուանայն հայրապետութեան հայոց, — ասում է Կաղանկատուացին, — էր մեծ մարտ ընդ Մովսէս եւ ընդ Թէոդորոս Կարնոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին. եւ ուղղափառքն աղարտէին զՀռոմոնց զամենայն կրօնսն» (տե՛ս Բ, գլուխ ԽԶ): Վեցերորդ դարի վերջերում եւ հոթերորդ դարի սկզբում եկեղեցական նշանաւոր գործիչ էր եւ հռչակաւոր մատենագիր Վրթանէս վարդապետը, որի մականունն էր դարձեալ «Քերթող»։ Նոյն այս շրջանում յունաբան դպրոցի մատենագիրներից էր Գրիգոր Քերթողը, որի Աբրահամ կաթողիկոսին գրուած թուղթը տպուած է «Գիրք թղթոցում» (էջ 99—107, տե՛ս նաեւ վերեւ սոյն ուսումնասիրութեան § 37-ը): Սեբէոսի վկայութեամբ, Կոստանդ կայսրը հայերի հետ կրօնական միութիւն հաստատելու համար Հայաստան էր ուղարկել «այր մի ի Բագրեւանդ գեղջէ՝ որ էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան, եւ անուն նորա Գաւիթ» (Գլուխ ԼԳ): Այս Գաւիթը 648—649 թուին ներկայ է եղել Ներսէս կաթողիկոսի գումարած Դմիտրի ժողովում: Ստեփանոս Ասողկը հաղորդում է նոյնպէս, որ նա «ի Բագրեւանդ գաւառէ ի Բագրեւանդ գեղջէ» էր եւ «էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան» (Պետերբուրգ 1885, էջ 91): Վերեւ մենք տեսանք, որ Գաւիթ-Ուրիմ պիղոգորոսի խմբի մեկնութիւնները վերագրուելու են երկաբնակ հայերի միջավայրին: Միանգամայն հնարաւոր է, որ եւս Գաւիթը, իրեւն ականաւոր պարագլուխ երկաբնակ հայերի, կարող էր որոշ կապ

ունենալ Գաւիթ-Ուրիմպիղոգորոսեան իմաստասիրական դպրոցի հետ:

Մի այլ Գաւիթ, որ թարգմանել է Բարսեղ Կեսարացու «ի ծնունդն փրկչին» ճառը, անուանուում է նոյն ճառի յիշատակարանում «Գաւիթ թարգման Տարաւնացի»։ Գարեգին եպիսկ. Յովսէփեանն այս Գաւիթին նոյնացնում է Գաւիթ Հարքացի հռչակաւոր փիլիսոփայի հետ, որը ժամանակակից էր Անաստաս կաթողիկոսին (661—665թ.) եւ Աշոտ պատրիկին (685—690թ.)¹: Ի՞նչ դարում կան եւ ուրիշ յայտնի մատենագիրներ, որ անուանուում են «փիլիսոփայ» կամ «Քերթող»:

Ինչպէս տեսնում ենք, Զ—Ի դարում յայտնի են մի շարք հեղինակներ հայոց մատենագրութեան մէջ, որոնք անուանուում են «փիլիսոփայ», «Իմաստասէր», «Քերթող», «Ճարտասան», «Թարգման» եւ բոլորն էլ, ամենայն հաւանականութեամբ, պատկանում են յունաբան դպրոցի մատենագիրների խումբին:

Մատենագրական վերոյիշեալ վկայութիւնները բոլորովին նման չեն առասպելական աւանդութեան յետնադարեան յերիւրանքներին, ստոյգ ու վաւերական են, եւ պարզ ցոյց են տալիս, որ յունաբան դպրոցն ունեցել է յաջորդական ու յարատեւ զարգացում, սկսած հինգերորդ դարի վերջերից: Ուրեմն իմ եզրակացութիւնները, որ մանրազնին քննութեամբ լուսարնուած են այս աշխատութեան մէջ, ոչ միայն չեն հակասում, այլ կատարելապէս համապատասխանում են մատենագրական այդ ստոյգ ու հաւաստի ցուցումներին:

Ուշագրութեան արժանի է, որ բացի Պետրոս Սիւնեցուց բոլոր վերոյիշեալ «փիլիսոփայ», «Քերթող» եւ «Ճարտասան» հեղինակները, որոնց ծննդավայրը կամ գործունէութեան տեղը յիշատակուած են, ծնուել են Բագրեւանդում կամ Տարաւնում, իսկ երկուսը Բագրեւանդի ու Կարնոյ եպիսկոպոսներ են:

Նիկ. Աղբալեանը «Գիտողութիւններ Ն. Աղբալեանի նոր գրքի վրայ» յօդուածում² փորձ էր արել որոշելու Թրակացու քերականութեան թարգմանութեան տեղը: Նրա կարծիքով, քերականութեան թարգմանիչը յոյն բնագրի օրինակների փոխարէն բերում է համարժէք օրինակներ, առնուած իր անմիջական միջավայրից: Ի նկատի առնելով այդ օրինակները՝ Նիկ. Աղբալեանը գուշակում է, որ Թրակացու թարգ-

¹ Տե՛ս Ասողկի, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ 1885, էջ 83. Նաեւ Գալուստ Տէր-Մկրտչեան, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Վաղարշապատ 1902:

² Տե՛ս «Արարատ» 1907, յունուար եւ մարտ:

³ «Արարատ» 1919, յունւոգեկոս, էջ 70—71:

մանիչն ապրել է մի երկրում, ուր կայ ձեան հիւս, որ թ, ընկողգենիներ, այգիներ: Օրինալների մէջ յիշում են նաեւ Տարօնն ու Յրոնքը, Մամիկոնեան տան անունները: Այս ամէնը հիմք է ծառայում նրան ենթադրելու, որ թրակացու քերականութիւնը թարգմանուած պիտի լինի Տարօնում: Այս սրամիտ ենթադրութիւնը, որ թուում է ինձ բաւականաչափ հիմնաւորուած, կարելորու հետաքրքիր է այն տեսակէտից, որ թարգմանութիւնն տեղի ուղղամբ որոշում է նաեւ թարգմանութեան բարբառախօսական բնոյթը լեզուական առանձնայատկութիւնների միջովայրը: Ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ վկայութիւնները եւս յունարան հնագոյն հեղինակների ծննդավայրը կամ գործունէութեան միջավայրը որոշում են Բագրեւանդում, Տարօնում եւ Կարինում, կարելի է թերեւս ենթադրել, որ յունարան գպրոցի գլխաւոր կենդրոնները եղել են, հաւանաբար, Հայաստանի արեւմտեան կողմերում, որոնք գտնուել են յունական մշակոյթի անմիջական ազդեցութեան տակ: Ըստ երեւոյթին, արեւմտահայեր պէտք է լինեն նաեւ այն քաղկեդոնականները, որոնց շրջանում թարգմանուած պիտի լինեն, ինչպէս ենթադրեցինք, Գաւիթ-Ուլիմպիոգորոսի խմբի երկերը:

§ 53. Իրենէոսի «Յոյդ + աւելւոյն տարր-դո-րեան», եւ «Ըդդէմ հէրէ-աւ-դո», երեւել Բագրեւանդում էն յուն-բառ-Բագրեւանդ-Բագրեւանդ-Բագրեւանդ-Բագրեւանդ: — Իրենէոսի «Ըդդէմ հերձուածոց» գրուածքի հրատարակութեան առաջաբանում Կարապետ Տէր-Մկրտչեանն ու Երուանդ Տէր-Մինասեանը ենթադրում են, որ Իրենէոսի այս գրուածքն ու Յոյքը թարգմանուած են հայերէնի 650—750 թուականների միջեւ¹: Ֆր. Կոնիքիը, «Յուշարձանում» տպուած յոգուածում, հրատարակիչների այդ կարծիքը համարում է բացարձակապէս սխալ եւ Իրենէոսի թարգմանութիւնները գնում է հինգերորդ դարի առաջին կիսում²: Համեմատելով Իրենէոսի եւ Փիլոնի թարգմանութիւնների լեզուն, Պրոֆ. Կոնիքիը մասնացոյց է անում լեզուական բազմաթիւ նմանութիւններ եւ եզրակացնում, որ

այդ թարգմանութիւնները պէտք է համարուեն միեւնոյն թարգմանչի աշխատութիւն: Թարգմանութեան ժամանակի վերոյիշեալ որոշումը նա հիմնում է հենց թարգմանիչների այդ նոյնութեան վրայ: Ընդունելով որ Փիլոնի երկերը թարգմանուած են հինգերորդ դարի առաջին կիսում, նա նոյն եզրակացութիւնն է անում նաեւ Իրենէոսի թարգմանութիւնների նկատմամբ:

Պրոֆ. Կոնիքիը այս վերջին ենթադրութիւնը, որի միակ հիմքը նրա յայտնի եզրակացութիւններն են Խորենացու ժամանակի վերաբերմամբ, աւելի քան անհաւանական է ու կասկածելի: Սակայն նրա դիտողութիւնը Փիլոնի ու Իրենէոսի թարգմանիչների նոյնութեան մասին, որ նա փաստաբանում է լեզուական մանրաքննի ու կարելոր համեմատութիւններով, միանգամայն հիմնաւոր է ու համոզիչ:

Նոյն այս խնդրի առթիւ վերջերս լոյս տեսաւ «Հանդէս Ամսօրեայ» ուսումնական թերթում Հ. Արիստակէս Վարդանեանի ուշագրաւ մի յօդուածը՝ «Լեզուական նմանութիւններ Փիլոնի եւ Իրենէոսի հայ թարգմանութիւններում մէջ» (1921 թ., սեպտ.—հոկտ., էջ 450—458): Հ. Վարդանեանը, քննութեան առնելով այդ թարգմանութիւնների լեզուական առանձնայատկութիւնները, հաստատում է նոր օրինակներով նրանց բառամթերքի նոյնութիւնը, ցոյց է տալիս այդ թարգմանութիւնների մէջ սովորական բառերի այլմաստ կիրարկման նմանութիւններ, մատնանշում է Ս. Գրոց թարգմանութեան համանման մի շարք հատուածներ եւ, հիմնուելով լեզուական այս դիտողութիւնների վրայ, Գր. Ար. Կոնիքիը ենթադրութիւնը գտնում է հիմնաւոր եւ Փիլոնի ու Իրենէոսի թարգմանիչների նոյնութիւնը համարում է վերջնականապէս ապացուցուած:

Պրոֆ. Կոնիքիը ու Հ. Ա. Վարդանեանից առաջ Իրենէոսի թարգմանութեան խնդիրը փորձել էր լուսաբանել Հ. Ն. Ակինեանը (տե՛ս «Ս. Իրենէոս հայ մատենագրութեան մէջ», ՀԱ. 1910, Յուլիս, էջ 200—208):

Հ. Ակինեանը ցոյց էր տուել իր յօդուածում, որ Իրենէոսի հայերէն թարգմանութիւնները կատարուած են ոչ թէ ասորերէն կամ լատիներէն, այլ յունարէն բնագրից: Գալով թարգմանութեան ժամանակին, նա ենթադրում էր, որ Իրենէոսի գրուածքները թարգմանուած են հայերէնի 604 թուից առաջ, որովհետեւ թարգմանութեան հետքերը պարզ նկատելի են վրթանէս քերթողի թղթերից մէկում, որ վեր-

¹ Տե՛ս Irenäus, Gegen die Häretiker, Leipzig 1910 էջ IV—V. Նաեւ Des heiligen Irenäus Schrift zum Erweise der Apostolischen Verkündigung, Leipzig 1907 էջ IV—V:

² The age of the old Armenian Version of Irenäus, «Յուշարձան» գրական ժողովածոյ, Վիեննա 1911, էջ 193—202:

ջինս գրել էր Սուրմէն ստրատելատին: Կոյն յօ-
գուածում է. Ակինեանը մատնացոյց էր արել,
որ բացի Վրթմանէս քերթողից «Ընդդէմ հեր-
ձուածոց» հայերէն թարգմանութիւնից օգտուել
է նաեւ վեցերորդ դարի հեղինակ «Յոհան Կար-
նոյ քաղաքացին»: Է. Ակինեանի վերոյիշեալ
եղբակացութիւնները հիմնաւորուած են փաս-
տական ապացոյցներով եւ խիստ կարեւոր էին
այն տեսակէտից, որ Իրենէոսի թարգմանութեան
ժամանակն ինքնուրու էին վեցերորդ դար: Սա-
կայն անհաւանական էր Է. Ակինեանի մի ուրիշ
ենթադրութիւնը, իբր թէ Իրենէոսի թարգմա-
նիչն է Վրթմանէս քերթողը եւ որ թարգմանու-
թիւնը կատարուած է վեցերորդ դարի վերջին
տասնամեակին: Այս ենթադրութիւնը, աւելի
ճիշտ գուշակութիւնը, որ հիմնաւորուած է բա-
ւարար ու գոհացուցիչ ապացոյցներով, կարելի
է այժմ անտես առնել, որովհետեւ Իրենէոսի
թարգմանութեան ժամանակը, ինչպէս կը տես-
նենք, զրուելու է վեցերորդ դարի երկրորդ կի-
սից առաջ:

Վերոյիշեալ յօդուածներում Իրենէոսի
թարգմանութեան խնդիրը թուում է ինձ մեծ
չափով պարզուած: Ֆր. Կոնիբրի ու Է. Վար-
դանեանի լեզուական լուրջ ու հիմնաւոր դիտո-
ղութիւններից յետոյ՝ պէտք է վերջնականապէս
ապացուցուած համարել, որ Իրենէոսի հայերէն
թարգմանութիւնները ժամանակակից են փրկոյնի
թարգմանութիւններին: Իրենէոսի «Ընդդէմ
հերձուածոց» թարգմանութիւնից օգտուել են,
ինչպէս ցոյց է տուել Է. Ն. Ակինեանը, Վրթա-
նէս քերթողը եւ Յոհան Կարնոյ քաղաքացին:
Կարեւոր այս վկայութիւնը դարձեալ աներկ-
բայելի մի նոր ապացոյց է, որ Իրենէոսի թարգ-
մանութիւնները շատ աւելի հին են, քան կար-
ծել էին հրատարակիչներն իրանց առաջարա-
նում:

Աւելի առաջ ունենալով այս ակներեւ եզ-
րակացութիւնները, նաեւ յունարան գպրոցի
յաջորդական զարգացման այն ընթացքը, որ
լուսաբանուած է սոյն իմ ուսումնասիրութեան
մէջ, կարծում եմ, որ Իրենէոսի թարգմանու-
թիւնների ժամանակը հնարաւոր է որոշել ա-
ւելի ճշգրիտ կերպով, քան այդ արուած է վի-
րոյիշեալ յօդուածներում:

Ներում:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՍՆԴԻՆ

(Շարունակելի):

ԻՋՄԻՆԺՆԻ ՄԱՏՆԱԳԱՐԱՆԻ ԻՄԱՍՏ- ՍԻՐԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՁԵՌՆԱԳՐՆԵՐԸ

(Շարունակելի):

Թ. 1884, 8 էջմ. մատն. — Մայր Յուցակ,
թ. 184:

Թուղթք՝ 116: — Գրութիւն՝ $13 \times 8,5$
սմ.: — Տողք՝ 19—24: — Նիւթ՝ ողորկ
հաստ թուղթ: — Գիր՝ հին բոլորգիր վեր-
նագրերն ու սկզբնատողերը կարմիր թանա-
քով: — Լուսանցադարձք՝ լուսանցապատ-
կերներ սկզբնատողերին կից: — Կաղմ՝ կա-
շկապատ տախտակ: — Հանգամանք՝ ձե-
ռագիրս խիստ վնասուած է եղել. ԺԸ դա-
րում նորոգած Մեսրոպ սարկաւազի ձեռ-
քով: Նորոգուած թերթեր 1—6 եւ 13—19,
որոնց վրայ Մեսրոպ սարկաւազը լրացրել
է ձեռագրիս թերակատար մասերը: Սկիզբէն
եւ վերջէն դատարկ թերթեր: — Նորոգման
թուականը՝ ՌՃՁԴ=1733: — Նորոգման
տեղը՝ Էջմիածին: — Գրիչ՝ Յովհաննէս: —
Ստացաւ՝ Ստեփաննոս քահանայ: — Թուա-
կան՝ չունի, ըստ երեւոյթին՝ ԺԴ—ԺԵ դար:
Բովանդակութիւն.

1. Հին Ջուղայեցի Ստեփաննոս վրդապո-
յաչակերտէն առ Դաւիթ անյաղթ փրկիսո-
փայն Հայոց (տաղ): Ձեռագրի սկզբում
էջերը չեն դրուած:

Սկիզբն է. Ի յարմատոց բղխեալ ուշէղ
զեղադարձ.

Հարանց մեծաց եւ երջանկաց մաքրա-
դարձ:

Վերջ.

Սուրբ երջանիկ հայրդ աղաչեմք բարձրա-
ձայն,

Բարեխաւսեալ առ մարմնացեալ մեծ արքայն,
Յորժամ հընչէ փողն ահագին մեծաձայն,
Դասել ըզմեղ ուղղափառացն ամենայն:

2. Էջ 1ա—109բ. Դաւիթ փրկիսոփայի
ներքինացւոյ, Յաղագս սահմանց [պրակք
Ա.—ԻԱ]:

Լուսանցքների վրայ մեկնութիւններ
յետնագոյն ժամանակի: Սկիզբն է (էջ 1ա).
Որք միանգամ իմաստութեան տենչան բա-
նից՝ առ ի նմանէն հեշտութեանց Խն:

Վերջ. Արդ՝ զգիտական զաւրութիւնսն
զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ զկենդա-